ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-1-3-Ա

ք. Երևան 12.01.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի հունվարի 12-ի նիստում քննարկեց 2022 թվականի դեկտեմբերի 27-ին Արման Գևորգյանի (Երևան, Սայաթ-Նովա 15ա շ., բն. 4, ԱՄ) կողմից ներկայացված «BASTARD ԲԱՍՏԱՐԴ» (№20220817) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, ինչպիսիք են, օրինակ, այն նկարները, պատկերները, բառերը կամ բառային արտահայտություններն և դրանց համակցությունները, որոնց տեսքը, բովանդակությունը կամ իմաստը հակասում են հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ նիշի գերիշխող մաս է զբաղեցնում «Bastard» բառը և դրա հայերեն գրադարձությունը, որտեղ «Bastard»-ը անգլերենից թարգմանաբար նշանակում է «սրիկա, ապօրինածին երեխա, տականք», հետևաբար նման ապրանքային նշանի գրանցումը հակասում է բարոյականության սկզբունքներին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև

անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, ինչպիսիք են, օրինակ, այն նկարները, պատկերները, բառերը կամ բառային արտահայտությունները և դրանց համակցությունները, որոնց տեսքը, բովանդակությունը կամ իմաստը հակասում են հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ նիշի գերիշխող մաս է զբաղեցնում «Bastard» բառը և դրա հայերեն գրադարձությունը, որտեղ «Bastard»-ը անգլերենից թարգմանաբար նշանակում է «սրիկա, ապօրինածին երեխա, տականք», հետևաբար նման ապրանքային նշանի գրանցումը հակասում է բարոյականության սկզբունքներին:

Բողոքարկողը ծանուցվել էր, սակայն ներկա չէր նիստին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Արման Գևորգյանի կողմից ներկայացված «BASTARD ԲԱՍՏԱՐԴ» (No20220817) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ